# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 88-Ա

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Արմավիր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 10 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ԹԻՎ 88-Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ԹԻՎ 10 ՆԻՍՏ

29.11. 2019 թ.
Ժամը՝ $11^{00}$

1.Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 103-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկ.՝ Ա.Գրիգորյան

2.Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

Զեկ.՝ Ա.Աբգարյան
Ա.Ստեփանյան

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրր համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 25-ի թիվ 03-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ.՝ Մ.Կոստանյան

4.Արմավիր համայնքի սեփականություն համարվող հողամաս աճուրդային եղանակով օտարելու մասին:

Զեկ.՝ Մ.Կոստանյան

5. Արմավիր համայնքի սեփականություն համարվող հողամաս աճուրդային եղանակով օտարելու մասին:

Զեկ.՝ Մ.Կոստանյան

6. Արմավիր համայնքի սեփականություն համարվող հողամաս աճուրդային եղանակով օտարելու մասին:

Զեկ.՝ Մ.Կոստանյան

7.<<Արմավիրի քաղաքապետարանի ընբշամարտի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին:

Զեկ.՝Ա.Դոլինյան

8.Համայնքի ավագանու՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի N 82-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:

Զեկ.՝Ա.Դոլինյան

9.Տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին:

Զեկ.՝Ա.Դոլինյան

10.Տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին:

Զեկ.՝Ա.Դոլինյան

11.Շարժական գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

12.Գույքահարկի արտոնություններ սահմանելու մասին: Զեկ.՝Ա.Աբգարյան

13.Օգնություն հատկացնելու մասին: Զեկ.՝Ա.Տիգրանյան

Զեկ.՝Ա. Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 89-Ն

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 103-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1.Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի <<Արմավիր Համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 103-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն N1, N2, N3, N4 հավելվածների.

1) Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի եկամուտները ավելացնել 21249,0 հազ. դրամով, այդ թվում

ա) պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ սուբվենցիաներ 1257 տողին ավելացնել 1475,2հազար դրամ՝<<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների զբաղվածության ապահովում>> ծրագրի շրջանակներում ստացվող սուբվենցիա:

բ) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացումներ (սուբվենցիա) 1261 տողին ավելացնել 21249,0 հազար դրամ:

գ) Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ 1393 տողից պակասեցնել 1475,2հազար դրամ՝<<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների զբաղվածության ապահովում>> ծրագրի շրջանակներում ստացվող գումարներ:

2) Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի ծախսերը ավելացնել 21249,0 հազար դրամով, այդ թվում՝

ա) 04 բաժնի 5 խմբի 1 դասի <<Ճանապարհային տրանսպորտ >> ծրագրի <<Շենքերի և կառույցների կապիտալ վերանորոգում>> 5113 հոդվածին ավելացնել 21249,0 հազար դրամ՝ Սայաթ-Նովա փողոցի Ջիվան-Հանրապետության, Մյասնիկյան փողոցի Ջիվան-Չարենց

հատվածների ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների սուբվենցիոն ծրագրի շրջանակներում պետության կողմից աշխատանքների 45 տոկոս մասնակցության գումար.

բ) 08 բաժնի 2 խմբի 4 դասի <<Այլ մշակութային կազմակերպություններ>> ծրագրի ծախսերի <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> 4239 հոդվածին ավելացնել 3127.0հազար դրամ՝ Ամանորյա միջոցառման կազմակերպման համար:

գ) <<Նախադպրոցական դաստիարակություն>> 09 բաժնի 1 խմբի 1 դասիծրագրի << Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծախսերի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> 4511 հոդվածին ավելացնել 606.0հազար դրամ՝ (4212 հոդված՝ ջեռուցման համար անհրաժեշտ բնական գազամատակարարման ծառայություն ձեռքբերելու համար):

դ) 11 բաժնի 1 խմբի 2 դասի <<Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ>> ծրագրի ծախսերի <<պահուստային ֆոնդ>> 4891 հոդվածից պակասեցնել 3733.0 հազար դրամ.

2) Արմավիր համայնքի 2019թ. բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 89 ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՏՎԱԾ 1

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

| Տողի NN | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | Ընդամենը (ս.5+ս.6) | վարչական մաս | ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 5 | 6 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300), այդ թվում՝ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ(տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝ | 22724,2 | 1475,2 | 21249,0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից,(տող 1251 + տող 1254 + տող 1257 | 1475,2 | 1475,2 | X |
| 1257 | գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 1475,2 | 1475,2 | X |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից՝ (տող 1261 + տող 1262), այդ թվում՝ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 1261 | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380+ տող 1390), այդ թվում՝ | -1475,2 | -1475,2 | 0,0 |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝ | -1475,2 | -1475,2 | 0,0 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | -1475,2 | -1475,2 | 0,0 |

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 89-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՏՎԱԾ 2

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2450 | 04 | 5 | 0 | *Տրանսպորտ, որից`* | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2800 | 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860), այդ | 3127,0 | 3127,0 | 0,0 |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 3127,0 | 3127,0 | 0,0 |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970 | 606,0 | 606,0 | 0,0 |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից`* | 606,0 | 606,0 | 0,0 |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 606,0 | 606,0 | 0,0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110), այդ թվում` | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից`* | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -3733,0 | -3733,0 | 0,0 |

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 89-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՏՎԱԾ 3

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5 +ս.6) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | | | |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ | x | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4210+տող4220+տող4230+տող4240+տող4250+տող4260) | x | 0,0 | 0,0 | |
| 4230 | *ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ* | x | 3127,0 | 3127,0 | X |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 3127,0 | 3127,0 | X |
| 4400 | 1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ (տող4410+տող4420) | x | 3127,0 | 3127,0 | X |
| 4410 | *ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ* (տող4411+տող4412) | x | 606,0 | 606,0 | X |
| 4411 | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 606,0 | 606,0 | X |
| 4700 | *1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ* (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770) | x | 606,0 | 606,0 | X |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ* (տող4771) | x | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | x | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | 21249,0 | X | 21249,0 |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | x | 21249,0 | X | 21249,0 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 21249,0 | X | 21249,0 |
| | | | 21249,0 | X | 21249,0 |

ՀԱՎԵԼՎԱԾ N 4
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 89-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՏՎԱԾ 6

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Կ.Տ.

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2450 | 04 | 5 | 0 | *Տրանսպորտ* | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| | | | | շենքերի և շին.-ի կապիտալ վերանորոգում 5113 | 21249,0 | 0,0 | 21249,0 |
| 2800 | 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860) | 3127,0 | 3127,0 | 0,0 |
| 2824 | 08 | 2 | 4 | *Այլ մշակութային կազմակերպություններ* | 3127,0 | 3127,0 | 0,0 |
| | | | | ընդհանուր բնույթի այլ ծառայություն 4239 | 3127,0 | 3127,0 | 0,0 |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+ | 606,0 | 606,0 | 0,0 |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից`* | 606,0 | 606,0 | 0,0 |
| 2911 | 09 | 1 | 1 | *Նախադպրոցական կրթություն* | 606,0 | 606,0 | 0,0 |
| | | | | սուբսիդիա 4511 | 606,0 | 606,0 | 0,0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -3733,0 | -3733,0 | 0,0 |
| | | | | պահուստային միջոցներ 4891 | -3733,0 | -3733,0 | 0,0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 90-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-14-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի առաջին մասի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով.

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 ՀՀ դրամ,

բ. սույն կետի, <ա> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 ՀՀ դրամ,

-500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 ՀՀ դրամ,

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 ՀՀ դրամ,

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 ՀՀ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 ՀՀ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 ՀՀ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի, <ա> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքեւմ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղեւկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝.50000 ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 ՀՀ դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 ՀՀ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 ՀՀ դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 ՀՀ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում, առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար 350 ՀՀ դրամ.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների,խաղատների և բաղնիքների (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 ՀՀ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 ՀՀ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 ՀՀ դրամ,

դ. խաղատների համար՝ 500000 ՀՀ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 400000 ՀՀ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 100000 ՀՀ դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 5000 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 10000 ՀՀ դրամ,

- 50ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 15000 ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 20000 ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 30000 ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 50000 ՀՀ դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 1000 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 2000 ՀՀ դրամ,

- 50ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 4000 ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 8000 ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 15000 ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 25000 ՀՀ դրամ,

11) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 5000 ՀՀ դրամ.

12) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիսը մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 ՀՀ դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 ՀՀ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 ՀՀ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 ՀՀ դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% -ի չափով 187.5 ՀՀ դրամ.

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%- ի չափով՝ 75 ՀՀ դրամ.

13) Համայնքի խորհրդանիշերը ( զինանշան, անվանում և այլ), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 100000 ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ( բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 ՀՀ դրամ.

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 ՀՀ դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 ՀՀ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 ՀՀ դրամ,

գ. 7 հա –ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 ՀՀ դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 ՀՀ դրամ:

**2. Տեղական վճարների դրույքաչափերը սահմանել՝**

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 ՀՀ դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը,վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումը ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 ՀՀ դրամ.

3) ճարատարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 ՀՀ դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի ( փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 ՀՀ դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 ՀՀ դրամ.

6) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

- ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 ՀՀ դրամ կամ

- ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 ՀՀ դրամ:

բ. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

- առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 ՀՀ դրամ.

- հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 Հայաստանի Հանրապետության դրամ.

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 ՀՀ դրամ.

- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 ՀՀ դրամ.

- շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով:

գ. Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 ՀՀ դրամ, կամ

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 ՀՀ դրամ:

դ. համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1500ՀՀ դրամ.( կից՝ հավելված)

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 5000 ՀՀ դրամ

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 100 ՀՀ դրամ:

8) <<Արմավիրի ջրամատակարար>> ՀՈԱԿ-ի կողմից ոռոգման ջրի մատակարարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 1խմ համար 11 դրամ.

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար՝ 7000 ՀՀ դրամ.

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

Այդ թվում՝

<<Արմավիրի քաղաքապետարանի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում և <<Արմավիրի քաղաքապետարանի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ում՝

ա. երաժշտական գործիքների բաժնում ուսուցանող սանի համար՝ ամսական 4000 ՀՀ դրամ.

բ. պարի բաժնում ուսուցանող սանի համար՝ ամսական 4500 ՀՀ դրամ.

գ.կերպարվեստի բաժնում ուսուցանող սանի համար՝ ամսական 3500 ՀՀ դրամ.

դ. << Արմավիրի քաղաքապետարանի մարզադպրոց>> ՀՈԱԿ-ում ուսուցանող սանի համար՝ ամսական 2500 ՀՀ դրամ.

ե. << Արմավիրի քաղաքապետարանի ըմբշամարտի դպրոց>> ՀՈԱԿ-ում ուսուցանող սանի համար՝ ամսական 2500 ՀՀ դրամ.

զ.<<Արմավիրի քաղաքապետարանի շախմատի դպրոց>> ՀՈԱԿ-ում ուսուցանող սանի համար՝ ամսական 1000 ՀՀ դրամ.

3. Սույն որոշման առաջին մասի 1-3րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 1,0 գործակցի կիրառմամբ, 4-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,75 գործակցի կիրառմամբ, 5, 7,8,10,11,12,13,15 կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,5 գործակցի կիրառմամբ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 91-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Նորմատիվ իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2019թ. հունվարի 25-ի <<Արմավիր համայնքի խնամակալության եվ հոգաբարձության հանձնաժողովի անհատականկազմը հաստատելու մասին>> թիվ 03-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.

1.1 Որոշմամբ հաստատված հավելվածում <**քարտուղար՝ Ջուլիետտա Ավդալյան - Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ**> բառերը փոխարինել <**քարտուղար՝ Ջեմմա Ղազարյան - Արմավիրի համայնքապետարանի** աշխատակազմի քարտուղարության բաժնի երկրորդ կարգի **մասնագետ**> բառերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 92-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 21.05.2019թ. թիվ 32-Ա որոշումը՝

### ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից՝ համայնք Արմավիր Երևանյան փողոց 49/8 հասցեում գտնվող՝ 04-001-0075-0274 ծածկագրով, 0,04675 հա մակերեսով խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, որից 370,0 քմ մակերեսով հողամասը երկհարկանի շինություն՝ առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, 97,5 քմ մակերեսով հողամասը՝ սպասարկման նպատակով:

2.Աճուրդի մեկնարկային գին սահմանել մեկ քմ մակերեսով հողամասի համար ՝ 5880 ՀՀ դրամ, ընդամենը՝ 2748900 (երկու միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2019թ. նոյեմբերի 29

ք.Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 93-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 21.05.2019թ. թիվ 32-Ա որոշումը և 18.10.2019թ. թիվ 79-Ա որոշումները՝

### ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից՝ համայնք Արմավիր Երևանյան փողոց 17/11 հասցեում գտնվող՝ 04-001-0075-0276 ծածկագրով, 0,011 հա մակերեսով խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, որից 88,0 քմ մակերեսով հողամասը մեկ հարկանի շինություն՝ առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, 22,0 քմ մակերեսով հողամասը՝ սպասարկման նպատակով:

2.Աճուրդի մեկնարկային գին սահմանել մեկ քմ մակերեսով հողամասի համար՝ 5880 ՀՀ դրամ, ընդամենը՝ 646800 ( վեց հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության  Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019  թվականի N 94-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և  հիմք ընդունելով Արմավիր համայնքի  ավագանու 21.05.2019թ. թիվ  32-Ա  որոշումը՝

### ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից՝ համայնք Արմավիր Երևանյան փողոց 49/9 հասցեում գտնվող, 04-001-0075-0275 կադաստրային ծածկագրով 0,02669 հա մակերեսով խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, որից 213.0 քմ մակերեսով հողամասը երկհարկանի շինություն՝ առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, 53.9 քմ մակերեսով հողամասը՝ սպասարկման նպատակով:

2.Աճուրդի մեկնարկային գին սահմանել մեկ քմ մակերեսով հողամասի համար՝ 5880 ՀՀ դրամ, ընդամենը՝ 1569372 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար երեք հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 95-Ա

## <<ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով <<Արմավիրի քաղաքապետարանի Ըմբշամարտի դպրոց>> ՀՈԱԿ ըմբշամարտի մարզիչ Արմեն Մալխասյանի՝ 21.11.2019թ. թիվ 3742 դիմումը և Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն Արմեն Մալխասյանին 2019 թվականի դեկտեմբերի 2-ից նշանակելու <<Արմավիրի քաղաքապետարանի Ըմբշամարտի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈՒԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 96-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 82-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի՝ 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 3737 զեկուցագիրը՝

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի ավագանու՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի՝ <<<<ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 82-Ա որոշմամբ հաստատված հավելված 1-ում 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բառերով՝ <<16. Ջեռուցման օպերատոր, 1.0, 78000>>:

2. Հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

2.1. 1-ին պարբերությունում <<19>> թիվը փոխարինել <<20>> թվով

2.2. Հաստիքային միավորների <<Ընդամենը>> սյունակում <<19.40>> թվերը փոխարինել <<20.40>> թվերով:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 97-Ա

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2019թ. փետրվարի 22-ի N 14-Ն որոշումը, <<ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի՝ 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 3398 զեկուցագիրը և արտոնություններ ստանալու նպատակով ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը՝

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի արտոնությունը կիրառել 2019 թվականի դեկտեմբերի 1-ից՝ համաձայն հավելված 1-ի,
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ.նոյեմբեր 29

ք.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ԹԻՎ 97-Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶՐՈՅԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ՝ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՍԱՀՄԱՆԵԼ՝

**1.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սանի համար՝**

1. Վարդանյան Արինա Արթուրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 98-Ա

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2019թ. փետրվարի 22-ի N 14-Ն որոշումը, <<Արմավիրի քաղաքապետարանի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-տնօրենի՝ 2019 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 3651 զեկուցագիրը և արտոնություններ ստանալու նպատակով ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը՝

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության ծառայությունից օգտվողների՝ համար տեղական վճարի դրույքաչափի 50 % նվազեցում արտոնությունը կիրառել 2019 թվականի դեկտեմբերի 1-ից՝ համաձայն հավելված 1-ի,

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ԹԻՎ 98-Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ 50 % ՆՎԱԶԵՑՈՒՄ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ՝ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՍԱՀՄԱՆԵԼ՝

**1.<<Արմավիրի քաղաքապետարանի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի հիշյալ սաների համար՝**

1.Ալվինա Գևորգի Մանուկյան

2.Մերի Համլետի Թովմասյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 99-Ա

## ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,հիմք ընդունելով <<Բարեկարգում>> տնօրինության տնօրեն Լ. Գրիգորյանի 2019 թվականի նոյեեմբերի 22-ի թիվ 3770 զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Արմավիրի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող /հիմք՝ տեխնիկական անձնագիր HE N 169331, տրված 12.02.2014 թվականին ՀՀ Ոստիկանության կողմից/ ԶԻԼ -130 մակնիշի, տիպը՝ բեռնատար, թափքը՝ ջրցան, 1988 թվականի արտադրության, 807 OS 61 պետ. համարանիշի ավտոմեքենան անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով տրամադրել <<Բարեկարգում>> տնօրինությանը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌՆԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբերի 29

ք.Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 100-Ա

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.2019 թվականի գույքահարկի արտոնություններ սահմանել հետևյալ ֆիզիկական անձանց համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2019թ. նոյեմբեր 29

ք.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 -Ի
ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ԹԻՎ 100-Ա ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | ՀՎՀՀ | Սոց. քարտ | Ազգանուն, անուն | Հաշվառման հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Հարկի նվազեցում 2019թ. արտոն. չափը (դրամ) | ՈՒմ նախաձեռնությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գույքահարկ շինությունների գծով | | | | | | | |
| 1 | R0063799 | 3827020050 | Գաբրիելյան Նորիկ | Գ. Լուսավորիչ 18ա. | Գ. Լուսավորիչ 18ա. | 4376 | Համայնքապետի |
| 2 | R0065126 | 1303790084 | Բարսեղյան Արթուր | Սահման. 3նրբ. 13ա. | Սահման. 3նրբ. 13ա. | 4170 | Համայնքապետի |
| 3 | 10902763 | 1212350138 | Սիրեկանյան Ալբերտ | Սահման. 2նրբ. 48ա. | Սահման. 2նրբ. 48ա. | 1475 | Համայնքապետի |
| 4 | 10902747 | 1305370295 | Սահակյան Կորյուն | Սահման. 2նրբ. 44ա. | Սահման. 2նրբ. 44ա. | 4550 | Համայնքապետի |
| 5 | R0070623 | 5202730136 | Մուրադյան Նանա | Սահմանապահ. 83ա. | Սահմանապահ. 83ա. | 1456 | Համայնքապետի |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 101-Ա

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 103-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 29-ի թիվ 22 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 3760 եզրակացությունը՝

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիր համայնքի 2019 թվականի բյուջեի <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> 10 բաժնի 7 խմբի 1-ին դասի ծախսերի 4729 հոդվածի միջոցներից օգնություն հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՌԼԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2019թ. նոյեմբեր 29

ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ԹԻՎ 101-Ա
ՈՐՈՇՄԱՆ

| N | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՍՑԵ | ԳՈՒՄԱՐ (ԴՐԱՄ) |
|---|---|---|---|
| 1 | Աննա Իվանյան | Չարենցի փ., 28 շենք, 29 բն. | 40000 |
| 2 | Դավիթ Դավթյան | 21 փ., 13 շենք, 19 բն. | 20000 |
| 3 | Մարիամ Երիցյան | Ջիվանու փ., 17 շենք, 4 բն. | 20000 |
| 4 | Ժաննա Հովակիմյան | Շահումյան փ., 11/1 շենք 36 բն. | 20000 |
| 5 | Եսենիա Հարությունյան | Ավետիսյան փ., 1-ին նրբ., 4 տուն | 20000 |
| 6 | Վիկտորիա Երանոսյան | Շահումյան փ., 14 շենք, 29 բն. | 20000 |
| 7 | Ալվարդ Ներսիսյան | Բաղրամյան փ., 9/3 շենք 18 բն. | 20000 |